Պիղատոս

Ես ձախողվեցի՝ առանց ձախողելու…

Գարուն էր: Օրը՝ ուրբաթ: Այգաբաց էր, երբ ասացին, թե քահանայապետն իմ ապարանքի առաջ է: Ատում էի նրան. մեծամիտ, կեղծավոր մեկն էր նա, որի քահանայապետ լինելու միակ արժանիքը նախկին քահանայապետի փեսան լինելու պատիվն էր: Եկել էին ապարանքս ու չէին մտնում՝ ասելով, իբր չեն ուզում պղծվել: Երանի թե չգային, որովհետև իրենց գալով պղծեցին իմ անունը, իմ պատիվը: Ես չէի կարող դուրս չգալ. քահանայապետը առիթը բաց չէր թողնի ինձ նախատելու՝ իրենց օրենքները չիմանալու պատճառով: Դուրս եկա: Տեսնեմ մեկին են բերել, որին շատ դժվար է մի քանի բառով նկարագրելը. նրան չի կարելի նկարագրել այն բառերով, որոնցով երբևէ ուրիշներն են նկարագրվել: Իբրև հմուտ դատավոր (ես դատավոր էի, հռոմեացի կուսակալ՝ Հուդայի կառավարիչը) միայն կարող եմ ասել, որ յուրաքանչյուր հանցագործի աչքերի մեջ կարելի է կարդալ իր հանցանքը: Այդ մարդու աչքերում պարզություն էր, այն պարզությունը, որ լինում է միայն մանկական անմեղ աչքերում. անմեղ էր: Ես փորձեցի խույս տալ նրան դատելուց. իզուր էր: Քահանայապետը վաղուց ամեն ինչ ծրագրել էր այնպես, որ ինձ մնում էր միայն իմ դերը տանել: Ես շփոթված էի: Մտա իմ ապարանք ու հրամայեցի մեղավորին էլ բերել. պիտի հարցաքննեի Նրան:

Հարցաքննությունս էլ հարցաքննության նման չէր: 44 տարեկան էի, նա՝ 33: Սակայն տպավորություն էր, որ ոչ թե մեր տարիքային տարբերությունն էր 11 տարին, այլ հենց իմ տարիքը. սարսռում էի, երբ Նա խոսում էր: Ես չգիտեի, բայց վստահ էի, որ Նա հերթական մեկը չէր, որ Նա միակն էր: Հարցերիս պատասխանում էր կարճ, ոչ թե որովհետև գիշերը սաստիկ ծեծել էին, այլ որովհետև ես արժանի չէի Նրա բառերին: Ամեն շնչի հետ հասկանում էի, որ Նա է: Մի պահ էլ եկավ, երբ խոսեց ճշմարտության մասին: Հարցրի՝ «Ի՞նչ է ճշմարտությունը»: Նա մեղմ ժպտաց, կախեց գլուխը: Ես հասկացա՝ Նա իսկ էր ճշմարտությունը: Նրա դեմ դուրս գալը կնշանակեր դուրս գալ ճշմարտության դեմ, ծառայել ստին… Ուղղակի դուրս նետվեցի ապարանքից, որ փրկեմ Նրան: Դրսում քահանայապետի կողքին մի մեծ ամբոխ էր կուտակվել. նույն ամբոխը, որ տարիներ առաջ ինձ ստիպեց կայսեր պատկերը հանել իրենց տարածքից, որ ստիպեց մոռանալու իմ՝ տաճարի փողերով ջրանցք կառուցելու ծրագրի մասին. հիմա էլ եկել էին ստիպելու արդարին խաչել, ես էլ էլի պարտվելու էի: Ամբոխը տեսնելուն պես իրար խառնվեցի: Ասացի, որ արդար մեկին են բերել ինձ մոտ և որի մեջ ոչ մի հանցանք չտեսա: Ասացի, որ նրան գանակոծել կտամ ու կազատեմ: Այդ պահին պատահաբար հիշեցի, թե այդպիսի մի ավանդույթ կա՝ Զատկի տոնին մի բանտարկյալի ազատ արձակելու: Թվում էր՝ ամեն ինչ հրաշալի մտածեցի, այնինչ քահանայապետը ավելի խորամանկ էր: Ընդունված էր, որ ազատվողի անունը պիտի քահանայապետը տար, իմ գործը ազատելն էր: Նա խոսեց. «Մեզ համար ազատիր Հիսուսին…»,- աչքերս արցունքոտվելու չափ ուրախ էին այդ անունը լսելիս, բայց վաղ էր…,- «Բարաբբային»: Ամեն ինչ փոխվեց մի վայրկյանում: Քահանայապետը

պահանջում էր ազատ արձակել մի մարդասպանի՝ արդար մեկի փոխարեն։ Ես ուղղակի ապշած էի։ Հարցրի. «Այդ դեպքում մյուս Հիսուսին ի՞նչ անեմ»։ Պատասխանեց հաղթող ամբոխը՝ «խաչիր դրան»։ Ես ապշած էի. խոստովանում եմ, որ ես էլ կյանքում միշտ չէ, որ արդար եմ եղել, բայց երբեք, լսո՞ւմ եք, երբեք արդարի չեմ սպանել։ Սպանե՞լ ու ի՞նչի համար, որովհետև իրեն «Աստծո Որդի՞» է կոչել։ Նորից ներս գնացի ինչ-որ բան փոխելու հույսով։ Նա էլի լուռ էր։ Երբ հերթական հարցիս չպատասխանեց ու հոգոց հանեց, կատաղեցի, հիշեցրի, որ Իր կյանքն իմ ձեռքերում է։ Պատասխանը քարացնող էր. ասաց, թե իմ՝ Իր վրա ունեցած իշխանությունը ինձ ի վերուստ է տրված. ուրեմն Նա էլ էր ի վերուստ եկած։ Ինձ մոտ մի կարծեցյալ սպառիչ պատասխանից հետո առաջացան բազում առկախ հարցեր, որոնց, սակայն, նա չէր պատասխանելու։ Երբ հերթական հարցիս նա լռությամբ արձագանքեց, կատաղած հրամայեցի նրան գանակոծել։ Մտածում էի՝ գուցե հրեաներն այդքանով բավարարվեն։ Սենյակում մի ծայրից մյուս ծայրն էի չափում ոտքերով, երբ ստացա կնոջս նամակը։ Մի նախադասություն էր գրված. «Այդ արդարի արյունը չթափես հանկարծ»։ Կինս ինչպե՞ս գիտեր Նրա մասին։ Ես դուրս եկա ամբոխի մոտ ու հայտարարեցի, թե Հիսուսին՝ Բարաբբային ազատել եմ, նույնը կանեմ նաև մյուս Հիսուսի հետ։ Ամբոխը աղաղակներ բարձրացրեց ու ձայնեց՝ «խաչիր դրան»։ Մի քանի րոպե տևած ամբոխի ճիչը ընդհատվեց քահանայապետի ձեռքի շարժումով. «Եթե դրան արձակես, կայսրին բարեկամ չես…»։ Նա իմ օրենքը օգտագործեց իմ դեմ։ Մինչ այս պահը մտածում էի, թե մի ճար կլինի արդարին փրկելու, հիմա վստահ էի՝ չկա. կամ ինքն էր իր կյանքը տալիս բոլորի համար (ինչը շատ ժամանակ անց պիտի հասկանայի), կամ ես իմ կյանքը՝ իր ապրելու դիմաց։ Ես ընտրեցի այնպես, ինչպես կաներ յուրաքանչյուրը, ու վստահ եմ, որ իմ կյանքի փոխարեն ցանկացած «կամ» պիտի լիներ ավելի քիչ կարևոր…

Հիշեցի կնոջս տողերը, հիշեցի, ինչպես իմ օրենքը իմ դեմ օգտագործեցին, ու վիրավորված արժանապատվությունս փրկելու համար պարտվողին հարիր մի քայլ արեցի։ Հրամայեցի ջուր բերել, որի մեջ հրապարակային ձեռքերս լվացի՝ հայտարարելով, որ այդ անմեղի արյան մեջ ես անպարտ եմ. արյունահեղության մեջ անմեղությունը խորհրդանշող հին հրեական սովորույթն էր այդպիսին։ Ու Նրան տարան… ու խաչը հանեցին։ Նրա հետ ինձ էլ խաչեցին, արժանապատվությունս էլ, խիղճս էլ, անունս էլ։ Վերջին բանը, որ կարողացա անել Նրա համար, խաչի վրա երեք լեզվով «հրեաների թագավոր» գրելն էր։ Գրագիրս այդտեղ չէր ու չկար գրագետ մեկը, որ կարողանար երեք լեզվով գրել ուզածս։ Ինքս վերցրի ու գրեցի «Հիսուս Նազովրեցի՝ հրեաների թագավոր»։ Երեք լեզվով գրեցի, որ բոլորը տեսնեն, որ բոլորն իմանան, թե իրոք հրեաների թագավորն էր։ Քահանայապետը մտավ ապարանքս՝ վախեցած, թե մի վնասակար բան կարող եմ անել ու մոռացավ էլ պղծվելու մասին։ Երբ տեսավ գրածս, առաջարկեց փոփոխել, նայեցի աչքերին ու ամբողջ ատելությամբ ասացի. «Ինչ գրեցի՝ գրեցի»։

Այս պատմության մեջ ոչ ոք չհիշեց էլ քահանայապետին կամ այն ամբոխը, չէ՛, ես եղա վճիռը կայացնողը, մեղադրվողը… Ես դատեցի արդարին՝ անարդարորեն. երանի թե մի օր Նա ինձ ավելի մեղմ դատի, քան ես համարձակվեցի դատել Իրեն։ Չկա մի առավոտ այն դեպքից հետո, որ գիշերը քնից վեր չթռչեմ այն նույն ձայնը լսելուց. Նրա վերջին ձայնն էր՝ մեռնելուց առաջ։ Ես անիծում եմ հիմա կայսրին, իմ բախտն ու ողջ աշխարհը. ես պարտվեցի աշխարհին։ Ու խաչվեց արդարությունը՝ մեծաքանակ ստի մեջ, ու մեռավ կյանքը՝ մահվան մեջ՝ մահվանը կենդանացնելու համար։ Այդ օրը ցերեկը դարձավ գիշեր, ու օրը խավարեց՝ մի նոր լուսավոր ցերեկի համար։ Ես նրան մատնեցի մահվան, Ինքն ինձ՝ անմահության. Նա Իր մահով ինձ անմահ դարձրեց՝ ինչպես բոլոր մարդկանց, միայն թե ես երևի պիտի միակ դժգոհողը լինեմ անմահությունից։ Նա հաղթեց աշխարհին, ես՝ պարտվեցի։

Ես ձախողվեցի՝ առանց ձախողելու…

Հովհաննես ուրկ. Ավետիսյան